ԱՐՄԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ - ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը վերաբերում է աշխատանքային վեճերի կանխարգելում իրականացնող պետական (վարչական) մարմինների իրավասությանը, որոնք վարչական ակտեր կիրառելու կամ էլ գործատուներին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վերադաս մարմիններին կամ դատարան ներկայացնելու եղանակներով իրականացնում են պետության կողմից աշխատանքային օրենսդրության կամ աշխատանքի նորմեր պարունակող իրավական ակտերի դրույթների պահանջների իրացումը, հետևաբար և՝ աշխատանքային իրավունքների ոչ դատական պաշտպանությունը՝ վարչական եղանակով:

Հիմնաբառեր *- աշխատանքի և աշխատանքի ընտրության ազատություն, հսկողություն, տեսչություն, ստուգում, ուսումնասիրություն, վարչարարություն, վարչական վարույթ:*

Աշխատանքի և աշխատանքի ընտրության ազատության իրավունքները մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջուկն են: Դրանց ընդհանուր հայտարարը, ըստ էության, աշխատանքն է: Եվ պատահական չէ, որ ժամանակակից պատկերացումներում աշխատանքի հայեցակարգն ընդլայնվում է որպես մարդկային բարձր արժեք, սոցիալական կարիք, ինքնիրացման և մարդկային անհատականության զարգացման միջոց[1]:

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը կախված են ոչ միայն դրանց իրավաբանական ճիշտ մոդուլավորումից (օրենսդրական ձևակերպումներից), այլև դրանց ապահովման և իրականացման իրական երաշխիքների ստեղծումից ու գործնական կիրառումից, այլ կերպ ասած՝ աշխատանքի կազմակերպման և կիրառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողությունից ու վերահսկողությունից[2], դրանց հիման վրա անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելուց, առանց որոնց աշխատանքային իրավահարաբերությունների խախտումների կապակցությամբ ծագած վեճերը այնքան բազմազան ու բազմաթիվ են, որ դատական մարմինները ֆիզիկապես ի վիճակի չեն լինի քննարկել և լուծել դրանք:

Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող հասարակական մարմինների, այդ թվում և արհմիությունների դերի մասին մենք արդեն խոսել ենք մեկ այլ գիտական հոդվածում[3], ուստի անդրադառնանք միայն հսկողության իրականացման վարչական եղանակներ իրականացնող մարմինների իրավասություններին: Այդ մարմինները բազմաթիվ են, իսկ դրանց գործունեությունն իրականացվում է Հանրապետության գերատեսչություններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում ստուգումներ և ուսումնասիրություններ կատարելու, վարչական վարույթ հարուցելու, գործը քննելու և օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու կամ նախազգուշացնելու համար, որպեսզի նրանք ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ, կամ էլ խախտված իրավունքները վերականգնելու համար դիմեն դատարան, որպիսի դրույթներ նախատեսված են «Աշխատանքի պետական տեսչության մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով:

Աշխատանքային օրենսդրության պահպանման, այն է՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողություն եզրույթն այսուհետ չենք օգտագործում) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ՀՀ առողջապահության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն), իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պետական մարմիններ:

Աշխատակազմի ՀՀ առողջապահության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն)

ստեղծվել, և նրա կառուցվածքն ու կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության՝ 2013 թվականի մայիսի 25-ի թիվ 857 – Ն որոշմամբ, որի մեջ միաձուլվեցին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը: Նշված օրենքով, սակայն, ուժը կորցրած ճանաչվեցին ՀՀ «Աշխատանքի պետական տեսչության մասին» 2005 թվականի մարտի 24-ի թիվ 20-77-Ն օրենքը և ՀՀ կառավարության՝ 2012 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1486-Ն որոշումը, որով կանոնակարգվում է Տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրառման հետ կապված ընդհանուր հարցերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների հիմքում դրված է դրանց համապատասխան իրավական հետևանքների կարգավորման միասնականությունը, մեր կածիքով, պահանջվում է նաև միասնական օրենքի ընդունում, որը և մենք առաջարկում ենք ոչ միայն կարգավորման միասնականություն ապահովող համալիր օրենք ընդունելու, այլ նաև ստուգման, դրա հետևանքների կիրառման հարցում օրինականություն ապահովելու, կամայականությունները կանխարգելելու նպատակով:

Աշխատանքային իրավահարաբերություններում նորմատիվ իրավական ակտերի կիրառման իրավասության, այդ թվում՝ Տեսչության աշխատանքի կազմակերպման և գործունեության բնագավառում կարգավորման իրավասությամբ օժտված են և՛ ՀՀ կառավարությունը, և՛ կառավարության լիազոր մարմինը, սակայն Տեսչությունն այդ հարցում այն հիմնական մարմինն է, որ Տեսչության մասին օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ունի բազմաթիվ լիազորություններ, այդ թվում՝

1. իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ գործատուների, դրանց միությունների, աշխատավորական կոլեկտիվ ներկայացուցիչների համար համապատասխան սեմինարներ կազմակերպելը,

2. վերը նշված սուբյեկտների և արհմիությունների համար աշխատանքի անվտանգության պաշտպանության մեթոդական օգնություն ցուցաբերելը, ինչպես նաև տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելը,

3. իրավական ակտերի կիրարկման կատարելագործման վերաբերյալ լիազոր մարմին առաջարկներ ներկայացնելը,

4. աշխատանքային օրենսդրության խախտումների պատճառները վերլուծելը և դրանց վերացման, աշխատողների խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ գործատուին առաջարկներ ներկայացնելը,

5. արտադրությունում դժբախտ դեպքերի և մասնագիտական գործունեությունից առաջացած հիվանդությունների պատճառներն ուսումնասիրելը, վերլուծելը և գործատուին դրանց կանխարգելման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը,

6. աշխատատեղերում աշխատանքի անվտանգության կոլեկտիվ և անհատական պաշտպանիչ միջոցների պաշտպանության և շահագործման վիճակն ուսումնասիրելը և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու միջնորդությամբ գործատուներին դիմելն ու վերջիններիս հսկողությունն ապահովելը,

7. աշխատանքի առողջ և անվտանգ նորմատիվների պահանջների խախտման վերաբերյալ փորձագիտական եզրակացության կամ արձանագրված թերությունների մասին ակտերի առկայության դեպքում խախտումների վերացման ժամկետներ սահմանելը, աշխատանքի առողջ ու անվտանգ պայմանների վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու միջնորդություններ կատարելը և խախտումների վերացման կատարման ժամկետներ սահմանելը,

8. աշխատանքի ընդունման, աշխատանքային գրքույկների, աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարման ու պահպանման կարգը, թաքնված զբաղվածության բացահայտման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ հսկողություն իրականացնելը և խախտումները վերացնելու համար գործատուին նախազգուշացնելը կամ նրան վարչական կամ էլ դատական (հնարավոր է՝ նաև քրեական) կարգով պատասխանատվության ներկայացնելը,

9. կոլեկտիվ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքը հսկելը և աշխատողների խախտված իրավունքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը:

Տվյալ դեպքում Տեսչությունն իրավասու է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան հարուցել վարչական վարույթ, կատարել գործի հանգամանքների քննություն և կայացնել վարչական ակտ, որում շարադրում է աշխատողների խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ գործատուի կողմից կատարման ենթակա գործողությունները կամ անգործությունը,

10. աշխատատեղում աշխատանքի անվտանգության և աշխատանքի պաշտպանության՝ օրեն-

քով սահմանված պարտադիր պահանջների նկատմամբ հսկելը և աշխատանքի պաշտպանության այլ յուրահատուկ միջոցներ առաջարկելը կամ հայտնաբերված խախտումների դեպքում գործատուին վարչական կամ դատական (հնարավոր է՝ նաև քրեական) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելը,

11. արտադրությունում դժբախտ դեպքերի հաշվառման և քննման հարցով կառավարության սահմանած և օրենքով նախատեսված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների ժամանակին վճարման նկատմամբ հսկելը և գործատուի կողմից դժբախտ դեպքերի հաշվառման և ծառայողների նկատմամբ քննության վերաբերյալ ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մարտի 23-ի թիվ 458-Ն որոշման պահանջները պահպանված չլինելու դեպքում օրենքի համապատասխան դրույթը պահպանելու հարցում գործատուին պարտավորեցնելը կամ օրենքի նորմի համաձայն պարտավորություն սահմանելը,

12. մինչև 18 տարեկան անչափահասների, ինչպես նաև կանանց՝ աշխատանքային օրենքով սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ հսկողություն իրականացնելը և համապատասխան միջոցառումներ պարտադրելը կամ գործատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդություն կատարելը,

13. սեռային հատկանիշով պայմանավորված աշխատանքի ընդունման (իրավահավասարություն) սկզբունքի խախտումներն ուսումնասիրելը և վարչական պատասխանատվության վերաբերյալ համապատասխան միջոցներ կիրառելը, և վերջապես՝

14. գործատուներից պահանջել ձեռնարկելու համապատասխան միջոցներ՝ վերացնելու ուսումնասիրության և (կամ) ստուգումների ժամանակ աշխատանքի կազմակերպման ընթացքում հայտնաբերված այն խախտումներն ու թերությունները, որոնք կարող են առաջացնել առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ[4]:

Նկատենք, որ Տեսչության մասին օրենքի 10-րդ հոդվածի 18-21-րդ կետերը նախատեսում են ստուգումների հետևանքով ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի՝ քրեական հետապնդման (հանցագործության) հատկանիշներ պարունակող խախտումների հարցերով իրավապահ մարմիններ դիմելու, դրանց համապատասխան նյութեր ներկայացնելու, վնասների վերականգնման հարցերով դատարան դիմելու, Տեսչության կողմից կառավարությանը և լիազոր մարմնին տարեկան հաշվետվություններ ներկայացնելու և այլ հարցերի մասին, որոնք զուգորդվում են Տեսչության գործառույթներին:

Աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողություն Տեսչությունից բացի իրականացնում են նաև ՀՀ-ում «Ստուգումների և կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված պետական այլ մարմինները ևս, որոնք օժտված են իրենց գերատեսչության շրջանակներում ստուգումներ և ուսումնասիրություններ կատարելու իրավասությամբ: Դրանք սանիտարահակահամաճարակային մարմիններն են, որոնք գործում են ՀՀ բնակչության սանիտարահակահամաճարակային անվտանգության ապահովման մասին 1992 թվականի նոյեմբերի 16-ի՝ ՀՀ օրենքի հիման վրա, ՀՀ արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության վարչությունը, որի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ վարչապետի՝ 1996 թվականի հունվարի 10-ի թիվ 8 որոշմամբ, որն էլ ենթարկվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Պետական ատոմային հսկողության մարմինները, հարկային տեսչության մարմինները, ՀՀ պաշտպանության նախարարության մարմինները և այլն, որոնք օժտված են ստուգումներ և ուսումնասիրություններ կատարելու, վարչական վարույթ հարուցելու, վարչական գործեր քննելու և օրինախախտ անձանց պատասխանատվության ենթարկելու կամ այդպիսի միջնորդությամբ դատարան կամ այլ մարմիններ դիմելու իրավունքներով: Նշված մարմիններն իրենց գործունեության ընթացքում իրավունքների պաշտպանություն առաջին հերթին իրականացնում են գործատուների նկատմամբ վարչական ակտեր կիրառելու կամ նրանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու միջոցով՝ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին և «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքներին համապատասխան:

Քաղաքացիական- աշխատանքային իրավունքների պաշտպանության ոչ դատական (արտադատական)՝ տվյալ դեպքում վարչական եղանակը գործնականորեն ոչ պակաս կարևոր է, քան դատական եղանակը:

www.journal.lawinstitute.am

[1] Տե՛ս K. Drzewicki "The labour law and labour rights/Economic, social and cultural rights: Textbook, Second revised edition" edited by Asbjorn Eide, Catarina Krause and Allan Rosas, M. Nijhoff Publishers, 2001, p. 315, 320-323.

[2] ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 3-րդ կետից և «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի բովանդակություններից բխում է, որ հսկողությունն ու վերահսկողությունը ներառում են ուսումնասիրությունները, ստուգումները և տեսչական ստուգումները, որ կարող են իրականացնել ինչպես պետական մարմինները, այնպես էլ հասարակական կազմակերպություններն ու մարմինները: Վերջին հանգամանքը թույլ է տալիս ասելու, որ «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթների իրական բովանդակությունը հստակ ընկալելու համար օրենսդրության մեջ կարելի է օգտագործել դրանցից մեկնումեկը:

[3] Տե՛ս Արմինե Չոբանյան, Կոլեկտիվ աշխատանքային վեճերի մինչդատական կարգավորման մի քանի հարցեր, Դատական իշխանություն, թիվ 7-8, 2014թ. 86-91 էջեր:

[4] Վարչարարության կարգը (պրոցեդուրան) քաղաքացիական - աշխատանքային վեճերի քննության եղանակների հետ և առանձին ուսումնասիրության առարկա կարող է լինել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով
2. ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք» Երևան, 2013թ.
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 1986.
4. Էլ. փոստ՝ http://www.arlis.am/documentview.aspx?docid=31167
5. http://www.un.org/en/documents/udhr/
6. http://www2.ohchr.org/english/law/cccpr.htm Հայաստանը դաշնագրին միացել է 1993 թվականի հունիսի 23-ին, և այն օրինական ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտմբերի 23-ին:
7. http://www.memo.ru/prawo/reg/GUS.htm.
8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի / - Եր. «Իրավունք», 2010թ.:
9. Պետրոսյան Գ. Վ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, հատուկ մաս, դասագիրք, Երևան, 2014թ.

Армине Чобанян
Аспирант кафедры гражданского процессуального права
Европейской региональной академии (ERA)
Член палаты адвокатов РА

РЕЗЮМЕ

Полномочия органов, предупреждающих гражданско-трудовые споры

Статья относится к полномочиям государственных (административных) органов, предупреждающих трудовые споры.

С целью применения административных актов или привлечения работодателей к административной ответственности, государственные органы, через вышестоящие органы или суд, от имени государства осуществляют требования трудового законодательства или правовых актов, содержащих положения о трудовых нормах, и, следовательно, защиту трудовых прав в административном, несудебном порядке.

Ключевые слова: *свобода работы и выбора работы, надзор, инспекция, проверка, исследование, бюрократизация, административное производство.*

Armine Chobanyan
PhD student of European Regional Academy (ERA)
Department of Civil procedural law
Member of chember of advocates of Armenia

SUMMARY

The powers of enforcement, warning of civil and labor disputes

The article "Powers of warning of civil and labor disputes" refers to the authority of the state (administrative) bodies, labor disputes warning.

With a view to the application of administrative acts or engaging employers to administrative responsibility by state bodies through the higher authorities or the court, on behalf of the state carried out the requirements of the labor legislation or legislation containing provisions on labor standards, and therefore the protection of labor rights in the administrative, non-judicial procedure .

Keywords: *freedom to work and choice of employment, supervision, inspection, check, research, bureaucratization, administrative proceedings.*